ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդայի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-1 / թափուր պաշտոնը զբաղեցնելու համար
Առաջին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է գույքահարկի, հողի հարկի, վարձավճարների, ինչպես նաև տեղական տուրքերի գանձման գործընթացը: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ:
Առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու հանար պահանջվում է
-առնվազն միջնակարգ կրթություն
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության «Համայնքային ծառայության մասին», «Գույքահարկի մասին», «Հողի Հարկի մասին», <Եկամտահարկի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» , « Իրավական ակտերի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները կկայանան 2013 թվականի մարտի 20-ին ժամը 11.00-ին, 13.00-ին, 15.00-ին Ջանֆիդա գյուղապետարանի շենքում: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2013 թվականի մարտի 06-ը ժամը 18.00-ին
Դիմող ՀՀ քաղաքացիները Ջանֆիդա գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
-դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/
-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույքի / վերջինից բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից / պատճենները բնօրինակների հետ միասին
-արական սեռի անձինք նաև զինգրկույքի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին:
-մեկ լուսանկար 3Х4 չափի
-անձնագրի պատճենը

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարին ծանոթանալու համար կարող դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի գյուղապետարան և ՀՀ Արմավիրի մարզի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն հեռախոս (0237) 2-76-49, 2-07-70